ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «31» մարտի 2020թ № 435-Ա

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 357-Լ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 9-րդ կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետի պահանջները՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Սահմանել՝
   1) Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառման շահառուների ընտրության ընթացակարգը՝ համաձայն N1 հավելվածի.
   2) Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառման շահառուների կողմից վարկերի մարման ընթացակարգը՝ համաձայն N2 հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Մարգարյանին:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2020 թվականի մարտի 31-ի 435–Ա հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի թիվ 357-Լ որոշման հավելվածով հաստատված «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառման» (այսուհետ՝ միջոցառում) իմաստով տնտեսավարողը (այսուհետ՝ շահառու), միջոցառման շրջանակում վարկային պայմանագրի կնքման նպատակով, «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՆԱԿ) առցանց հարթակում լրացնում է հայտ՝ ներկայացնելով հետևյալ տեղեկատվությունը.

1) շահառու հանդիսացող կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) անվանումը (անունը, ազգանունը, հայրանունը),

2) ՀՎՀՀ-ը,

3) շահառուի հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ կոնտակտային տվյալներ,

4) գործունեության հակիրճ նկարագրությունը,

5) գործունեության ոլորտը՝ ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը հաստատելու մասին» N874-Ն հրամանի հավելվածով սահմանված դասակարգիչների,

6) ՆԱԿ-ին ուղղված լիազորագիր (համաձայն սույն կարգի Ձև 1-ի)՝ էլեկտրոնային ստորագրությամբ, որով ՆԱԿ-ին լիազորում է ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ համակարգով կատարել հարցում (էլեկտրոնային ստորագրության բացակայության դեպքում, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գրանցման վկայական՝ վերջին ներդիրով): Լիազորագիր չտրամադրելու դեպքում շահառուն ներկայացնում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) համար ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ համակարգից ստացված Առևտրային վարկային զեկույց ամբողջական (ԱՌ3) տեղեկանքը,

7) 2019 թվականի համար կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) շրջանառությունը ըստ եռամսյակների՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին տրամադրված հաշվետվությունների (եթե կազմակերպությունը գործում է ընդհանուր հարկային դաշտում, ապա ներկայացվում է Ձև 240 (տարեկան) և Ձև 203 (ամսական), եթե կազմակերպությունը (անհատ ձեռնարկատերը) գործում է շրջանառության հարկի դաշտում, Ձև 232 (եռամսյակային)): Բոլոր հաշվետվությունները ներբեռնվում են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հաշվետվությունների ներկայացման համակարգի անձնական էջից,

8) հայցվող վարկի չափը և դրա մարման ժամկետը (ամիսներով),

9) տրամադրած տեղեկատվության հավաստիությունը փաստող հայտ՝ համաձայն սույն կարգի Ձև 2-ի:

2. Շահառուն հայտը էլեկտրոնային տարբերակով ներկայացնում է ՆԱԿ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 31-ի թիվ 416-Լ որոշման 3-րդ հավելվածով հաստատված կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառման շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքների կիրառման կարգի 8-14-րդ կետերով նախատեսված գործողությունների կատարումն ապահովելու նպատակով:

3. Եթե շահառուն չի հանդիսանում անհատ ձեռնարկատեր, ֆինանսական կազմակերպության ընտրության վերաբերյալ շահառուի հաստատումից հետո շահառուի լիազորված ներկայացուցիչը և երաշխավորը ներկայանում են ՆԱԿ՝ ՆԱԿ-ի և երաշխավորող(ներ)ի հետ երաշխավորության պայմանագրի կնքման նպատակով՝ ներկայացնելով անհատ երաշխավորի ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ համակարգից ստացված սպառողական վարկային զեկույց ամբողջական (ՍԶ3) տեղեկանքը:

4. Սույն կարգի 3-րդ կետով նախատեսված հաստատումն ունենալու դեպքում շահառուն ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

1)իրավաբանական անձանց դեպքում՝

ա. ընկերության կողմից ՆԱԿ-ին ներկայացված վարկ ստանալու վերաբերյալ հայտը, որում պետք է նշված լինի, որ շահառուն վարկը ցանկանում է ստանալ գործակալի միջոցով, գործունեության հասցեն,

բ. շահառուի կանոնադրությունը,

գ. վարկ ստանալու վերաբերյալ իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը,

դ. ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի վկայականը (առկայության դեպքում) և ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրված քաղվածք, այսուհետ՝ Քաղվածք,

ե. բաժնետիրական ընկերության դեպքում՝ ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիայի համապատասխան հաշվի օպերատորի կողմից տրված ընկերության արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակ,

զ. ընկերության տնօրենի անձնագիր (նույնականացման քարտի դեպքում՝ բացվածք), ընդ որում տնօրենի անձնագրային տվյալները, այդ թվում՝ հասցեն, պետք է համընկնեն Քաղվածքում նշված տնօրենի տվյալներին,

է. ԱՔՌԱ վարկային բյուրոյից ստացված Առևտրային վարկային զեկույց ամբողջական (ԱՌ3) տեղեկանքը,

ը. շահառուի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի առկայության/բացակայության վերաբերյալ տեղեկանք,

թ. շահառուի էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը:

2) Անհատ ձեռնարկատերերի դեպքում՝

ա. անհատ ձեռնարկատիրոջ կողմից ՆԱԿ ներկայացված վարկ ստանալու վերաբերյալ հայտ, որում պետք է նշված լինի, որ շահառուն վարկը ցանկանում է ստանալ գործակալի միջոցով,

բ. գործունեության հասցեն,

գ. անհատ ձեռնարկատիրոջ վկայական /առկայության դեպքում/ ևՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրված քաղվածք, այսուհետ՝ քաղվածք,

դ. անհատ ձեռնարկատիրոջ անձնագիր (նույնականացման քարտի դեպքում՝ բացվածք), ընդ որում, անհատ ձեռնարկատիրոջ անձնագրային տվյալները, այդ թվում՝ հասցեն, պետք է համընկնեն քաղվածքում նշված տվյալներին,

ե. ԱՔՌԱ վարկային բյուրոյից ստացված Սպառողական վարկային զեկույց ամբողջական (ՍԶ3) տեղեկանքը,

զ. անհատ ձեռնարկատիրոջ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի առկայության/բացակայության վերաբերյալ տեղեկանք,

է. անհատ ձեռնարկատիրոջ էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը:

5. Հայտի հետագա ընթացքի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 31-ի թիվ 416-Լ որոշման 3-րդ հավելվածով հաստատված կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառման շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքների կիրառման կարգ ի 15-20-րդ կետերի:

Ձև 1

«ԱՔՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՖՈՐԹԻՆԳ» ՓԲԸ-ԻՑ ՎԱՐԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

_____ «____» _____ թ.
(գրելու վայրը)

Սույն լիազորագրով _____՝
(լիազորողի անվանումը/անունը, պետական ռեգիստրում հաշվառման համարը, ՀՎՀՀ)

ի դեմս _____,
(ազգանունը, անունը, անձնագրի տվյալները (սերիա, համար))

ով գործում է _____ հիման վրա,
(իրավական հիմքը)

լիազորում է _____,
(լիազորվողի անվանումը)

ի դեմս _____,
(ազգանունը, անունը, անձնագրի տվյալները (սերիա, համար))

լիազորողի անունից հանդես գալու «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեֆորթինգ» ՓԲԸ-ի (վարկային բյուրոյի) հետ հարաբերություններում, այն է՝ *լիազորողի վերաբերյալ* ստանալու վարկային զեկույցներ և վարկային բյուրոյի կողմից մատուցվող այլ ծառայություններ, այդ կապակցությամբ «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեֆորթինգ» ՓԲԸ ներկայացնելու դիմումներ (հարցումներ), այլ անհրաժեշտ փաստաթղթեր, կատարելու այլ անհրաժեշտ գործողություններ՝ կապված սույն լիազորության հետ՝ *բացառությամբ* վարկային զեկույցների և վարկային բյուրոյի կողմից մատուցվող այլ ծառայությունների դիմաց վճարային պարտավորության, որը կկատարվի *լիազորողի կողմից*:

Սույն լիազորագիրը տրված է _____ գործողության ժամկետով՝ առանց վերալիազորման իրավունքի:

Լիազորող՝_____
(ստորագրություն, կնիք՝ առկայության դեպքում)

Ձև 2

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ

Սույնով հավաստում եմ, որ ----_____ _____ (կազմակերպության անունը) 2019 թվականին գործունեություն է ծավալել _____ ոլորտում, և Կազմակերպության շրջանառության 90%-ը բաժին է ընկնում նշված ոլորտին:

ԴԻՄՈՂ՝ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____

(անձնագրի համար, տրման ամսաթիվ, ում կողմից) (պաշտոն)

_____ _____ 2020 թ.

Հավելված N2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2020 թվականի մարտի 31-ի 435 – Ա հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԵՐԻ ՄԱՐՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի թիվ 357-Լ որոշման հավելվածով հաստատված «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառման» (այսուհետ՝ միջոցառում) իմաստով տնտեսավարողների (այսուհետ՝ տնտեսավարող) կողմից ստացված վարկի մարման համար որպես արտոնյալ ժամկետ է սահմանվում վարկի ստացման պահից հաշված 6 ամիս ժամանակահատվածը:

2. Սույն կարգի 1-ին կետով նախատեսված արտոնյալ ժամկետի ավարտին հաջորդող ամսից մինչև վարկային պայմանագրով նախատեսված վարկի մարման ժամկետի ավարտը, որը չպետք է գերազանցի 30 (երեսուն) ամիսը, վարկառուի կողմից վճարումներն իրականացվում են ամսական հավասարաչափ մարումներով՝ բացառությամբ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքերի:

3. Այն դեպքում, եթե տնտեսավարողը գործունեություն է ծավալում միջոցառման 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված կացության կամ զբոսաշրջության ոլորտներում, և վարկի չափը չի գերազանցում 10 (տասը) միլիոն ՀՀ դրամը, ապա սույն կարգի 1-ին կետով նախատեսված արտոնյալ ժամկետի ավարտին հաջորդող ամսից մինչև վարկի ստացմանը հաջորդող 12-րդ ամսի համար ամսական մարումները չեն կարող գերազանցել 70,000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամը, իսկ դրան հաջորդող ժամանակահատվածի համար, որը չի կարող գերազանցել 24 (քսանչորս) ամիսը, վճարումներն իրականացվում են ամսական հավասարաչափ մարումներով:

4. Տնտեսավարողն իրավունք ունի վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու): Վաղաժամ մարման դեպքում, մարման գրաֆիկը վերահաշվարկվում է՝ սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված կարգով:

5. Տնտեսավարողի կողմից իր պարտավորությունների ոչ պատշաճ կատարման կամ չկատարման համար պատասխանատվության միջոցները սահմանվում են վարկային պայմանագրով: